



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՅՈԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 18(438) «20» հուլիսի 2021թ.**

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

	<b>ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ</b>	
422	«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-77-Ն օրենքը.....	.
	<b>ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ</b>	
423	«Արցախի Հանրապետության պետական նախարարի կառավարման ոլորտում գործող Արցախի Հանրապետության բնակարանային հարցերի կոմիտե ստեղծելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-2539-Ն հրամանագիրը.....	.
424	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրում լրացում կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-2582-Ն հրամանագիրը.....	.
	<b>ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
425	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի N 351-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 743-Ն որոշումը.....	.
426	««Արցախի Հանրապետության ջրային կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու և «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» ու «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկները վերակազմակերպելու մասին» ԱՀ կառավարության N 744-Ն որոշումը.....	.
427	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 752-Ն որոշումը.....	.
428	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 753-Ն որոշումը.....	.
429	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 754-Ն որոշումը.....	.
430	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 759-Ն որոշումը.....	.
431	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 760-Ն որոշումը.....	.

432	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N 918-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 762-Ն որոշումը.....	.
433	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 11-ի N 57-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 763-Ն որոշումը.....	.
434	«Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 1-ի N 626-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 770-Ն որոշումը.....	.
435	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 771-Ն որոշումը.....	.
436	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 8-ի N 353-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 772-Ն որոշումը.....	.
	<b>ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ</b>	
437	«Անհատ ձեռնարկատեր Արթուր Արսենյանին բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիա տրամադրելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 167-Ա հրամանը.....	.
	<b>ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՑՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎՃՌԱԲԵՎ ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
438	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/2727/02/20 որոշումը.....	.

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

Ընդունված է 2021 թվականի  
հունիսի 30-ին

**«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ավելացված արժեքի հարկի մասին» 1998 թվականի դեկտեմբերի 18-ի ՀՕ-43 օրենքի 15-րդ հոդվածի 30-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«30) բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքեր, անհատական բնակելի տներ, ապաստարաններ և (կամ) թաքստոցներ կառուցապատող և (կամ) սեփականատեր և (կամ) կառուցապատողի և (կամ) սեփականատիրոջ հետ կնքված նախագծային աշխատանքների և (կամ) շինարարական կապալի պայմանագրերով կապալառու հանդիսացող անձի կողմից մինչև 2026 թվականի հունվարի 1-ը Արցախի Հանրապետության տարածքում բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքերի, անհատական բնակելի տների, ապաստարանների և թաքստոցների նախագծային փաստաթղթերի մշակումը, կառուցումը և (կամ) օտարումը:»:

**Հոդված 2.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հուլիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

2. Բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքեր, անհատական բնակելի տներ, ապաստարաններ և (կամ) թաքստոցներ կառուցապատող և (կամ) սեփականատեր և (կամ) կառուցապատողի և (կամ) սեփականատիրոջ հետ կնքված նախագծային աշխատանքների և (կամ) շինարարական կապալի պայմանագրերով կապալառու հանդիսացող անձի կողմից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը մշակված նախագծային փաստաթղթերի, կառուցված (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)) բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքերի, անհատական բնակելի տների, ապաստարանների և (կամ) թաքստոցների՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո օտարումը (հանձնումը) ազատվում է ավելացված արժեքի հարկից, իսկ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահը սույն օրենքով ազատվող գործարքներին վերաբերող՝ հարկային հաշիվներում առանձնացված և հաշվանցված ավելացված արժեքի հարկի գումարները ենթակա են Օրենքով սահմանված կարգով վերաձևակերպման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ առաջին հաշվետու ժամանակաշրջանում:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021թ. հուլիսի 14  
Ստեփանակերտ  
ՀՕ-77-Ն

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**

**ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ  
ՀԱՐՑԵՐԻ ԿՈՄԻՏԵ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Արցախի Հանրապետության կառավարության և պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 15-րդ կետը՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել Արցախի Հանրապետության պետական նախարարի կառավարման ոլորտում գործող Արցախի Հանրապետության բնակարանային հարցերի կոմիտե:

2. Արցախի Հանրապետության կառավարությանը՝ մեկամսյա ժամկետում ընդունել սույն հրամանագրից բխող համապատասխան որոշումներ:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021թ. հուլիսի 16  
Ստեփանակերտ  
ՆՀ-2539-Ն

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**

**ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ  
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆՀ-108-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **որոշում եմ.**

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Արցախի Հանրապետության կառավարության և պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՆՀ-108-Ն հրամանագրի հավելվածի 105-րդ կետի 4.1-ին ենթակետում «ջրային կոմիտեի նախագահին,» բառերից հետո լրացնել «Բնակարանային հարցերի կոմիտեի նախագահին,» բառերը:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021թ. հուլիսի 19  
Ստեփանակերտ  
ՆՀ-2582-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

9 հուլիսի 2021թ.

N 743-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի N 351-Ն ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Արցախի Հանրապետությունից անտառանյութի որոշ տեսակների արտահանումը արգելելու մասին» N 351-Ն որոշման 1-ին կետից հանել «կողահան և ոչ կողահան տախտակի», «տակառատախտակի», և «և փայտածուխի (բացառությամբ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը արտադրված փայտածուխի)» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

13 հուլիսի 2021թ.

N 744-Ն

ք. Ստեփանակերտ

**«ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ «ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՈՒ «ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 7-րդ, 17-րդ հոդվածները և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2021 թվականի հուլիսի 7-ի ՆՀ-2466-Ն հրամանագրով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Ստեղծել «Արցախի Հանրապետության ջրային կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

2. Վերակազմակերպել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ դրանից առանձնացնել ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսչությունը և ջրային տնտեսության և ինժեներական մեխորացիայի բաժինը (հաստիքներով և աշխատակիցներով հանդերձ) և այն միացնել «Արցախի Հանրապետության ջրային կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

3. Վերակազմակերպել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ դրանից առանձնացնել բնական պաշարների կառավարման քաղաքականության վարչության ջրամատակարարման համակարգերի կառավարման և ուսումնասիրման բաժինը (հաստիքներով և աշխատակիցներով հանդերձ) և այն միացնել «Արցախի Հանրապետության ջրային կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

4. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարին ու Արցախի Հանրապետության ջրային կոմիտեի նախագահին՝ երկշաբաթյա ժամկետում Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնել սույն որոշման ընդունումից բխող համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը:

5. Սահմանել, որ «Արցախի Հանրապետության ջրային կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը հանդիսանում է «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի և «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի իրավահաջորդը՝ վերակազմակերպմանը համապատասխան:

6. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշմամբ պայմանավորված՝ անհրաժեշտ վերաբաշխումներ կատարել

Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեում՝ մեկամսյա ժամկետում:

7. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

15 հուլիսի 2021թ.

N 752-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 380 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Աստղաշենի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 3,1 հեկտար արոտավայրը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

15 հուլիսի 2021թ.

N 753-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մարտակերտի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,695 հեկտար վարելահողը, 4,145 հեկտար այլ հողատեսքերը և պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 14,11 հեկտար թփուտները, համաձայն հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

15 հուլիսի 2021թ.

N 754-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 631 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մաղավուզի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 1,7468 հեկտար արոտավայրը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

16 հուլիսի 2021թ.

N 759-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 463 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Շոշի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,1 հեկտար վարելահողը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

16 հուլիսի 2021թ.

N 760-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 463 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Շոշի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ անտառային նպատակային նշանակության 0,137 հեկտար թփուտը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

16 հուլիսի 2021թ.

N 762-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 918-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ջեռուցման օրերի առավելագույն քանակ սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 765-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 918-Ն որոշման՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«1. Սահմանել Արցախի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող հիմնարկների ջեռուցման օրերի առավելագույն քանակ՝ տարեկան 150 օր՝ անկախ ջեռուցման համար օգտագործվող էներգիայի աղբյուրից:».

2) 1<sup>1</sup>-ին կետն ուժը կորցրած ճանաչել.

3) հավելվածն ուժը կորցրած ճանաչել:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

16 հունիսի 2021թ.

N 763-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 11-ի «Բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի ծախսերի որոշ մասի սուբսիդավորման կարգը և Արցախի Հանրապետության չգազաֆիկացված բնակավայրերի ցանկը հաստատելու մասին» N 57-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի ցանկի «1. ԱՀ Ք.ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ» բաժնի 3-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին տող.

«

3.1.	Նաբերեժնայա 3-րդ նրբանցք թիվ 2 շենք
------	-------------------------------------

» :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

17 հուլիսի 2021թ.

N 770-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 626-Ն ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 1-ի «Արցախի Հանրապետության բնակչության կոմունալ ծառայությունների փոխհատուցման աջակցության միջոցառումը հաստատելու մասին» N 626-Ն որոշման հավելվածում.

1) 5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին կետ.

«5.1. Այն վարձակալական հիմունքներով բնակվող բնակիչ բաժանորդները, ովքեր բնակվում են զազաֆիկացված բնակավայրերի չզազաֆիկացված բնակարաններում, կստանան սույն միջոցառման 4-րդ կետում նշված բնական զազի սահմանաչափերին համարժեք դրամական փոխհատուցում՝ վարձակալությամբ բնակությունը և չզազաֆիկացված լինելու փաստը հավաստող փաստաթղթերը Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնելուց և հաշվառելուց հետո:».

2) 8-րդ կետի 2-րդ նախադասությունը հանել.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետ.

«9. Սույն միջոցառման 4-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված աջակցության գումարը փոխանցվում է մատակարար կազմակերպության հաշվին, իսկ 5-րդ և 5.1-ին կետերով սահմանված դրամական փոխհատուցումները՝ համապատասխան բնակիչ բաժանորդների անհատական հաշիվներին:».

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

17 հուլիսի 2021թ.

N 771-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի մարտի 21-ի ««Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 45 որոշման 2-րդ կետում «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի» բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Պետական ծրագրի շրջանակներում բնակելի շինությունների վերակառուցման հետևանքով վարձակալական հիմունքներով բնակվող ընտանիքներին բնակարան վարձակալելու նպատակով ֆինանսական օգնության տրամադրման կարգը սահմանելու մասին» N 672-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 6-րդ կետում «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի» բառերով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 14-ի «Պետական ծրագրի շրջանակներում Արցախի Հանրապետությունում վարձակալական հիմունքներով բնակվող փախստականի հաշվառման վկայական ստացած ընտանիքներին ֆինանսական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 381-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 5-րդ կետում «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի» բառերով:

4. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 հունիսի 2021թ.

N 772-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 353-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 8-ի «Արցախի Հանրապետության գյուղական կամ քաղաքային՝ բացառությամբ Ստեփանակերտ և Շուշի քաղաքների, բնակավայրերում մշտապես բնակվող երիտասարդ ընտանիքներին բնակելի տներ կառուցելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» N 353-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման վերնագրում «ՔԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ԵՎ ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ,» բառերը հանել.

2) որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում «բացառությամբ Ստեփանակերտ և Շուշի քաղաքների,» բառերը հանել.

3) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի՝

ա. վերնագրում «ՔԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ԵՎ ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ,» բառերը հանել,

բ. 1-ին կետում, 4-րդ կետի 1-ին և 2.1-ին ենթակետերում, 27-րդ կետի 4-րդ ենթակետում «բացառությամբ Ստեփանակերտ և Շուշի քաղաքների,» բառերը հանել,

գ. 4-րդ կետի 1-ին ենթակետից հանել «վերջին հինգ տարիների ընթացքում» բառերը,

դ. 4-րդ կետի 6-րդ ենթակետում «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների» բառերով,

ե. 11-րդ կետում «պայմանագրով» բառից հետո լրացնել «, որի օրինակելի ձևը հաստատում է պետական ֆինանսական աջակցություն ապահովող մարմնի ղեկավարը» բառերը,

զ. 21-րդ կետի 1-ին պարբերությունից հանել «բացառությամբ սույն կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված դեպքերի» բառերը, իսկ 2-րդ ենթակետի 2-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

4) որոշմամբ հաստատված N 2 հավելվածում «ՔԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ԵՎ ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ,» բառերը հանել:

2. Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել որոշմամբ հաստատված N 1 հավելվածի համաձայն իրականացված աշխատանքների

ընթացքում հավաքագրված փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**ՀՐԱՄԱՆ**

«15» հուլիսի 2021թ.

N 167-Ա

ք. Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԹՈՒՐ ԱՐՄԵՆՑԱՆԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 26-րդ հոդվածների և 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 3-րդ կետի պահանջներով.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ**

1. Անհատ ձեռնարկատեր Արթուր Արսենյանի (հասցե՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Վ.Սարգսյան 1/48) բժշկական օգնության և սպասարկման համար լիցենզիա տրամադրելու վերաբերյալ հայտը բավարարել և տրամադրել **«ընտանեկան ստոմատոլոգիական»** գործունեություն իրականացնելու լիցենզիա, բժշկական օգնության և սպասարկման ձևը՝ արտահիվանդանոցային:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնին ապահովել՝

1) տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

**Մ. ՀԱՅՐԻՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում  
ԸԻԴ/2727/02/20

Քաղաքացիական գործ

Քաղաքացիական գործ ԸԻԴ/2727/02/20  
Նախագահող դատավոր՝ Ն.Գրիգորյան  
Դատավորներ՝ Մ.Ավանեսյան  
Կ. Մաղյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ  
թվական

30-ին հունիսի 2021

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝  
Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ Ն. Նարիմանյանի,  
մասնակցությամբ՝ դատավորներ  
Հ. Աբրահամյանի,  
Գ. Գրիգորյանի,  
Ի. Կարապետյանի,  
Կ. Ղարայանի,

որնբաց դատական նիստում քննության առնելով ըստ հայցի Լեոնիկ Մանվելի Հակոբյանի ընդդեմ Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության՝ աշխատանքից ազատելու մասին հրամանն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար հասանելիք գումարը գանձելու պահանջներով ԸԻԴ/2727/02/20 քաղաքացիական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2021 թվականի մայիսի 14-ի որոշման դեմ հայցվոր Լեոնիկ Հակոբյանի ներկայացուցիչ Ռոման Երիցյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը**

Լեոնիկ Մանվելի Հակոբյանի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ներկայացուցիչ Ռոման Արթուրի Երիցյանն Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող) դեմ 2020 թվականի դեկտեմբերի 16-ին հայցադիմում է ներկայացրել Արցախի Հանրապետության

ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան)՝ հրամանն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար հասանելիք գումարը գանձելու մասին պահանջներով:

Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ հայցադիմումը վարույթ է ընդունվել և հարուցվել քաղաքացիական գործ:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի հունվարի 18-ի որոշմամբ գործով հրավիրվել է նախնական դատական նիստ՝ 2021 թվականի փետրվարի 17-ին:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ գործը նշանակվել է դատական քննության:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի մարտի 19-ի վճռով հայցը բավարարվել է:

Նշված վճռի դեմ 2021 թվականի ապրիլի 13-ին վերաքննիչ բողոք է բերել Պատասխանողի ներկայացուցիչ Գ.Մարտիրոսյանը:

Քաղաքացիական գործը և վերաքննիչ բողոքը՝ կից փաստաթղթերով, Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) դատական կազմին են հանձնվել 2021 թվականի ապրիլի 16-ին:

Վերաքննիչ դատարանի 2021 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատական քննության:

Վերաքննիչ դատարանի 2021 թվականի մայիսի 14-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է. Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի մարտի 19-ի վճիռը մասնակիորեն բեկանվել է և փոփոխվել. ներկայացված հայցը՝ մերժվել:

Նշված որոշման դեմ Հայցվորի ներկայացուցիչ Ռ.Երիցյանը 2021 թվականի մայիսի 18-ին ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու կամ Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի մարտի 19-ի վճռին օրինական ուժ տալու խնդրանքով:

Գերագույն դատարանի 2021 թվականի հունիսի 15-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքին գրավոր պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ ներկայացված վճռաբեկ բողոքի՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածները, Արցախի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 57-րդ հոդվածը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասը, ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, անտեսել է ԵԿԴ/2998/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2013

թվականի որոշումը, ինչպես նաև նշյալ որոշման հիման վրա բազում այլ գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները:

Նշվածը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, որոշում կայացնելով Առաջին ատյանի դատարանի վճիռը լրիվությամբ բեկանելու, այն փոփոխելու և հայցը մերժելու մասին, դուրս է եկել իր լիազորությունների շրջանակներից՝ թույլ տալով Վերաքննիչ դատարանում գործի քննության սահմաններն ամրագրող դատավարական կանոնների պահանջների խախտում, ինչն էլ՝ իր հերթին, հանգեցրել է ԱՀ Սահմանադրությամբ և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված օրինականության սկզբունքի խախտման:

Վերաքննիչ դատարանը գնահատական է տվել նաև Հայցվորի՝ աշխատանքի ներկայանալու հարգելիության հարցին՝ նշելով, որ գործում առկա չէ Հայցվորի բացակայությունը հիմնավորող որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց: Անդրադառնալով Քարինգ համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքին՝ Վերաքննիչ դատարանը, որոշակի վերլուծություններ կատարելով, նշյալ ապացույցը համարել է ոչ վերաբերելի: Այն դեպքում, երբ նշյալով փաստվել է ոչ թե գյուղի ինքնապաշտպանությանը մասնակցելու, այլ պատերազմի օրերին ԱՀ տարածքում գտնվելու հանգամանքը: Դրանից բացի, ներկայացված հայցի հիմքը լրիվ այլ էր, ուստի աշխատանքի ներկայանալու հարգելիության փաստը հիմնավորելու պարտականություն Հայցվորը չի ունեցել:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը «հեղինակացրել» է ԵԿԴ/1896/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը, որը սույն գործի քննության հետ որևէ աղերս չունի, քանի որ բաժնետիրական ընկերություններն էապես տարբերվում են պետական ոչ առևտրային կազմակերպություններից, նրանց գործունեության նպատակները և օրինական շահերը լրիվ այլ են, ուստի Վճռաբեկ դատարանի կողմից բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակված անձին պաշտոնից ազատելու վերաբերյալ կատարված եզրահանգումները չեն կարող դրվել պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի պաշտոնը զբաղեցնող անձին աշխատանքից ազատելու հիմքում, մանավանդ այն դեպքում, երբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետում ուղղակիորեն ամրագրված է գործադիր տնօրենին ցանկացած ժամանակ աշխատանքից հանելու հնարավորությունը, ինչպիսի կարգավորում բացակայում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ԼՂՀ օրենքում:

Ըստ բողոքաբերի՝ գործատուն Հայցվորի հետ մտել է հենց դասական աշխատանքային իրավահարաբերությունների մեջ, քանզի պաշտոնի նշանակելիս գործատուն, այդ մասին հրամանում ուղղակիորեն նշում կատարելով, ղեկավարվել է ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածով, իսկ նույն պաշտոնից ազատելիս նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ուստի Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն առ այն, որ գործադիր մարմնի իրավական կարգավիճակն էապես տարբերվում է ԼՂՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ աշխատողի՝ ընդհանուր

իրավական կարգավիճակից կամ այլ կերպ՝ Հայցվորը չի հանդիսանում դասական աշխատող, իրավաչափ չէ:

Ըստ բողոքաբերի՝ գործատուն Հայցվորին աշխատանքից ազատելու հրամանի իրավական հիմքում դրել է ոչ թե «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ԼՂՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի «ե» ենթակետը, այլ այդ մասին հրամանում ուղղակիորեն նշում կատարելով՝ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը և նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը, խախտելով կողմերի մրցակցության սկզբունքը, անդրադարձել և բողոքաբերի փոխարեն հիմնավորել է վիճարկված հրամանում որևիցե կերպ չհիշատակած իրավական հիմքը:

Ըստ բողոքաբերի՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ԼՂՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի «ե» ենթակետով անձին աշխատանքից ազատելիս, գործատուն ևս պարտավոր էր պահպանել աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածով սահմանված՝ գրավոր բացատրություն պահանջելու կանոնը, քանզի, նախ՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ԼՂՀ օրենքով սահմանված չէ դրա կիրառման ընթացակարգը, ուստի պետք է ղեկավարվել ընդհանուր նորմով՝ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքով, և բացի այդ՝ նշյալ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի «ե» ենթակետով սահմանված՝ անձին աշխատանքից ազատելու հիմքը 3 օր անընդմեջ առանց հարգելի պատճառների աշխատանքի չներկայանալն է: Այլ կերպ ասած, նորմի կիրառման համար պարտադիր պայման է հանդիսանում աշխատանքի չներկայանալու հարգելիությունը, որպիսի փաստին կարելի է գնահատական տալ միայն բացատրություն պահանջելու և այն ուսումնասիրելու եղանակով: Հայցվորից բացատրություն վերցնելու հնարավորությունը Պատասխանողի մոտ օբյեկտիվորեն չէր բացառվում այն պարզ պատճառով, որ ըստ հայցադիմումի պատասխանի, Դատարանում հնչեցված բացատրության և վերաքննիչ բողոքի բովանդակության՝ գործատուն մի քանի անգամ կապ է հաստատել Հայցվորի հետ և խնդրել ներկայանալ աշխատանքի: Այլ կերպ ասած, աշխատանքի ներկայանալու պահանջ հասցեագրելու և բացասական պատասխան ստանալու հետ զուգահեռ՝ գործատուն կարող էր Հայցվորից պահանջել դրա վերաբերյալ ներկայացնել գրավոր բացատրություն (թեկուզ էլեկտրոնային եղանակով), մինչդեռ չի կատարել իր այդ պարտականությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճարել բողոքն ընդունել վարույթ, բեկանել Վերաքննիչ դատարանի ԸԻԴ/2727/02/20 քաղաքացիական գործով 2021 թվականի մայիսի 14-ի որոշումը և գործն ուղարկել Առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության կամ օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի 2021 թվականի մարտի 19-ի վճռին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Հայցվորը վիճարկել է Պատասխանողի 2020 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 106 անհատական իրավական ակտը: Վերջինս կայացվել է Հայցվորի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու և նրան պաշտոնից ազատելու



վերաբերյալ: Ընդ որում, որպես անհատական իրավական ակտի փաստական հիմք է նախանշվել Հայցվորի կողմից անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը, իսկ որպես իրավական հիմք՝ արձանագրվել ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, ԱՀ նախագահի 2020 թվականի հոկտեմբերի 14-ի ՆՀ-465-Ն հրամանագիրը, ԱՀ կառավարության 2004 թվականի մարտի 16-ի թիվ 97 որոշմամբ հաստատված հավելվածի 1-ի 13-րդ կետի 11-րդ ենթակետը:

2) Դիմելով դատարան, Հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել Պատասխանողի կողմից կայացված անհատական իրավական ակտը, քանի որ՝

ա) Հայցվորը 2020 թվականի հոկտեմբերի 03-ից՝ ԱՀ արդարադատության փոխնախարարի գիտությամբ, կամավորական հիմունքներով մեկնել է հայրենի գյուղ և մասնակցել նրա պաշտպանությանը: 2020 թվականի հոկտեմբերի 21-ին՝ փոխնախարարի հետ անհապաղ կապ հաստատելու և արխիվի տարհանման աշխատանքները կազմակերպելու Հայցվորին փոխանցված խնդրանքին վերջինս պատասխանել է, որ իր ներկայանալը՝ պատերազմական վիճակով պայմանավորված հնարավոր չէ, սակայն աշխատանքները կարող են կազմակերպվել իր տեղակալի հետ: Նույն պատասխանն է հնչել նաև հաջորդ օրը Հայցվորի հետ կապ հաստատած նախարարի հետ հեռախոսազրույցում:

բ) Հայցվորի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու և նրան աշխատանքից ազատելու վերաբերյալ անհատական իրավական ակտը կայացվել է գործող օրենսդրության պահանջների խախտմամբ, քանի որ Հայցվորից չի պահանջվել խախտման պատճառների մասին գրավոր բացատրություն:

3) Որպես հայցի իրավական հիմք են նախանշվել կարգապահական պատասխանատվության ենթարկելու կառուցակարգերը սահմանող ԼՂՀ աշխատանքային օրենսդրության նորմերը:

4) Առաջին ատյանի դատարանը՝ առանց անդրադառնալու Հայցվորի աշխատանքի չներկայանալու պատճառներին, հայցը բավարարել է՝ հիմք ընդունելով այն փաստը, որ գործատուն չի պահպանել կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու գործող կարգավորումները, այն է՝ աշխատողից չի պահանջել խախտման պատճառների մասին գրավոր բացատրություն:

5) Վերաքննիչ դատարանը հայցը մերժել է, արձանագրելով, որ սույն քաղաքացիական գործով կիրառելի են ոչ թե ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի կարգապահական պատասխանատվության կանոնները, այլ՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ԼՂՀ օրենքը, իսկ Հայցվորի աշխատանքից բացակայության պատճառները հարգելի համարելու որևէ ապացույց առկա չէ:

#### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Այս առնչությամբ Գերագույն

դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում, նախ, անհրաժեշտ է բացահայտել, թե՛

ա) ինչ սահմաններում է իրականացվում վերաքննությունը և

բ) ինչ օրենսդրական կարգավորումներ են նախատեսված աշխատողի՝ աշխատանքից անհարգելի բացակայության հիմքով աշխատանքային հարաբերությունները գործատուի կողմից միակողմանի դադարեցնելու վերաբերյալ:

Այնուհետ՝ նշված իրավական վերլուծությունների համատեքստում, քննության առնել ստորադաս դատարանների դատական ակտերի հիմնավորվածությունը: Այսպես՝

4.1. ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի համաձայն.

«1. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

2. Վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

3. Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ կամ հաստատված չհամարելու առաջին ատյանի դատարանի հաստատած փաստը, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

4. Եթե առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստի վերաբերյալ, ինչը պարտավոր էր անել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության»:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասը սահմանել է գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում Վերաքննիչ դատարանի լիազորությունների ամբողջական ցանկը:

Նշված իրավանորմերի վերլուծության արդյունքում Գերագույն դատարանը ԸԻԴ/3044/02/19 քաղաքացիական գործով 2020 թվականի սեպտեմբերի 07-ի որոշմամբ արդեն իսկ փաստել է, որ Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի

օրինականությունն ու հիմնավորվածությունը, միաժամանակ դատական վերահսկողություն է իրականացնում ստորադաս դատական ատյանի գործունեության նկատմամբ, որը ենթադրում է նաև դատական գործունեության ընթացքում բացահայտված սխալներին և խախտումներին արձագանքելու, դրանք վերացնելու համար անհրաժեշտ իրավական միջոցներ կիրառելու հնարավորությունը: Ուստի, Վերաքննիչ դատարանի որոշմամբ կամ հաստատվում է Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի ճշտությունը, վերացվում են ստորադաս դատարանի ակտում առկա թերությունները՝ անհրաժեշտության դեպքում լրացուցիչ կամ լրիվ պատճառաբանելով, ինչպես նաև փոփոխություն կատարելով դատական ակտում, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված հանգամանքները թույլ են տալիս դա անել, կամ դադարեցվում է վարույթը՝ գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերի առկայության դեպքում: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանն օրենքով նախատեսված կարգով և դեպքերում ստուգում և ուղղում է ստորադաս ատյանում թույլ տրված դատական սխալները, իսկ դրանք ուղղելու անհնարինության դեպքում (inter alia այն դեպքում, երբ գործի համար նշանակություն ունեցող որևէ ապացույց չի ներկայացվել և չի հետազոտվել)՝ բեկանում է դատական ակտը, գործն ուղարկելով ստորադաս ատյան նոր քննության, որպեսզի Առաջին ատյանի դատարանն ըստ էության քննի գործը՝ վերացնելով նախկինում գործի քննության ընթացքում թույլ տրված իրավունքի խախտումները: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով վերաքննության օբյեկտով, վերաքննության առարկայով (վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջով) որևէ կերպ կաշկանդված չէ:

Ըստ այդմ, վերաքննությունը ենթադրում է, որ Վերաքննիչ դատարանը կարող է վերանայել միայն՝

ա) դատական ակտի բողոքարկված մասը,

բ) այն հիմքերի և հիմնավորումների շրջանակներում, որոնք ներկայացվել են վերաքննիչ բողոքում,

գ) այն ապացույցների հաշվառմամբ, որոնք տրամադրված են եղել առաջին ատյանի դատարանին և

դ) այն պահանջների մասով, որոնք առաջին ատյանի դատարանում հանդիսացել են քննության առարկա, և որոնց վերաբերյալ դատարանը վճիռ է կայացրել:

Վերաքննիչ դատարանը, վերանայելով դատական ակտը, վերաքննիչ բողոքի բավարարման հիմքում չի կարող դնել հանգամանք, որի վերաբերյալ բողոք բերողը հիմնավորում չի ներկայացրել: Բացառություն կարող են կազմել այն դեպքերը, երբ առկա են դատական ակտն անվերապահ բեկանելու հիմքերը կամ ստորադաս դատարանը, սխալ կարգավորելով վիճելի նյութական իրավահարաբերությունը, ճիշտ չի որոշել նաև դրա բովանդակությունը կազմող սուբյեկտիվ նյութական իրավունքների և պարտականությունների ծավալը: Սակայն, այս դեպքում Վերաքննիչ դատարանը պետք է ոչ թե փոփոխի դատական ակտը, այլ՝ գործն ուղարկի նոր քննության:

Միևնույն ժամանակ, Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը գործի ըստ էության քննություն չի իրականացնում, ապացուցման առարկա չի որոշում, ապացույցներ չի հետազոտում: Դրանով

պայմանավորված, վերաքննիչ աստանի կողմից կայացված ակտերը ոչ թե գործն ըստ էության լուծող ինքնուրույն դատական ակտեր են, այլ դրանց վերանայման արդյունքում կայացվող որոշումներ են, որոնցով լուծվում է Առաջին աստանի դատարանի կայացրած վճռի հետագա ճակատագիրը:

4.2. Գերագույն դատարանն արձանագրում է, որ աշխատանքից բացակայելու պատճառներն անհարգելի համարելու և այդ հիմնավորմամբ աշխատողին աշխատանքից ազատելու գործատուի որոշման (հրամանի) իրավաչափությունը կարող է ստուգվել դատական կարգով: Ընդ որում, դատական ստուգումը պետք է իրականացվի առաջնահերթ հաշվի առնելով գործատու–աշխատող հարաբերությունների բնույթը:

Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող ունի աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Սահմանադրությամբ երաշխավորված աշխատանքի ընտրության ազատությունը յուրաքանչյուր անհատի համար ապահովում է առանց խտրականության աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու և իր մասնագիտական ու այլ ընդունակություններն ազատ դրսևորելու հավասար հնարավորություն: Միաժամանակ, այն չի խոչընդոտում օրենսդրին աշխատանքային հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս սահմանել անձանց իրավական տարբեր կարգավիճակներ՝ կապված աշխատանքային պայմանների, անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, և նույնիսկ նախատեսել առանձին պաշտոններ զբաղեցնելու և պաշտոններից ազատելու առանձնահատուկ դեպքեր, եթե դրանք օբյեկտիվորեն արդարացված են:

«Հայաստանի Հանրապետության 2004 թվականի աշխատանքային օրենսգիրքը Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ դնելու մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածի ուժով՝ 2005թ. հուլիսի 1-ից Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ է դրվել 2004թ. նոյեմբերի 9-ին ընդունված Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը (դրա հետագա փոփոխություններով և լրացումներով հանդերձ), այն վերանվանելով «Լեոնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք»-ի:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն. «1. Սույն օրենսգիրքը կարգավորում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

2. Աշխատանքային հարաբերությունների առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով»:

Նույն օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Արցախի Հանրապետությունում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են ԱՀ Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով, օրենքներով, այլ իրավական ակտերով, աշխատանքային և կոլեկտիվ պայմանագրերով:

Այսինքն, աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են ոչ միայն ԼՂՀ աշխատանքային օրենսգրքով, այլ նաև այլ իրավական ակտերով:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ աշխատանքային հարաբերությունների շուրջ առաջացած վեճերի քննարկման հարցում առաջնահերթ պետք է պարզել, թե ինչ կարգավորումներ են սահմանված գործատու-աշխատող հարաբերությունները կարգավորող հատուկ իրավական նորմերում: Ըստ այդմ, առանց հարգելի պատճառի աշխատանքի չներկայանալու ենթադրյալ փաստով պայմանավորված աշխատանքային հարաբերությունները միակողմանի լուծելու գործատուի գործողությունների իրավաչափությունը դատարանը պետք է նախ գնահատի կոնկրետ պաշտոնի (աշխատատեղի) համար սահմանված կարգավորումների համատեքստում:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Հայցվորը զբաղեցրել է «Արցախի Հանրապետության պետական արխիվ» ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնը: Հետևաբար, աշխատանքային կարգապահության խախտում կատարած լինելու հիմնավորմամբ նրան աշխատանքից ազատելու վերաբերյալ իրավահարաբերությունների կարգավորումները պետք է փնտրել համապատասխան օրենքում: Այսպես. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ պետական կազմակերպությունների մասին օրենսդրությունը բաղկացած է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, նույն օրենքից, այլ օրենքներից և իրավական ակտերից, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերից:

Նույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը, որին նշանակում և ազատում է (նրա լիազորությունները դադարում են) լիազորված պետական մարմինը, եթե հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Նույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝

ա) նա դիմում է այդ մասին.

բ) լրացել է նրա 65 տարին.

գ) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.

դ) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

ե) նա ավելի քան երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի.

զ) նա նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ, կամ առաջ են եկել սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված հանգամանքները.

(...)

5. (...)

Սույն հոդվածի 3-րդ կետի այլ ենթակետերով նախատեսված դեպքերում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են համապատասխան իրադարձությանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում»:

Վերը նշվածից հետևում է, որ պետական ոչ առևտրային կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում

է գործադիր մարմինը (տվյալ դեպքում՝ տնօրենը), որին պաշտոնի նշանակման և պաշտոնավարման դադարեցման լիազորությամբ օրենսդիրն օժտել է լիազորված պետական մարմնին (տվյալ դեպքում՝ Պատասխանողին):

Օրենսդրությունը սահմանել է նաև այն պայմանների սպառիչ ցանկը, որոնցից յուրաքանչյուրի առկայությունը անհնարին է դարձնում գործադիր մարմնի հետագա պաշտոնավարումը: Ընդ որում, օրենքը գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցնելու իրավասություն ունեցող մարմնի համար սահմանել է իմպերատիվ պահանջ՝ նշված օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա»-ից «ժգ» կետերում նշված որևէ պայմանի վրա հասնելու (այդ թվում նաև՝ երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով աշխատանքի չներկայանալու) դեպքում կայացնել գործադիր մարմնի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ որոշում: Վերջինս, ըստ էության, միայն հավաստում է օրենքի ուժով գործադիր մարմնի պաշտոնում անձի հետագա պաշտոնավարումն անհնարին լինելը, այն էլ օրենսդրի կողմից հստակ նախանշված ժամկետներում: Հենց այս նկատառումով էլ օրենսդիրը նշված պարտավորությունը կատարելու որևէ ընթացակարգ չի նախատեսել: Այսինքն, «Արցախի Հանրապետության պետական արխիվ» ոչ առևտրային կազմակերպության տնօրենի կողմից առանց հարգելի պատճառի երեք օր անընդմեջ աշխատանքի չներկայանալու փաստն ինքնին բավարար է արձանագրելու համար, որ օրենքի ուժով նրա պաշտոնավարումը դադարեցվել է: Նշվածը փաստաթղթավորելու համար ուղղակի անհրաժեշտ է մեկամսյա ժամկետում կայացնել համապատասխան որոշում:

Նշվածներով հանդերձ, Գերագույն դատարանը փաստում է, որ առանց հարգելի պատճառի աշխատանքի չներկայանալը, անկասկած, հանդիսանում է աշխատանքային կարգապահության խախտում: Հետևաբար, դրա վերաբերյալ ծագող բոլոր իրավահարաբերությունները պետք է ընկած լինեն կարգապահական պատասխանատվության կիրառման գործող կարգավորումների շրջանակներում և, եթե գործատու - աշխատող հարաբերությունները կարգավորող հատուկ նորմերն այլ բան չեն սահմանում, կիրառման ենթակա են ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի՝ կարգապահական պատասխանատվությանն առնչվող ընդհանուր նորմերը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի սահմանում է նաև աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունների կատարման կարգը: Մասնավորապես, ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:

Նույն օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ գործատուները, աշխատողները և նրանց ներկայացուցիչներն իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս պարտավոր են պահպանել օրենքը, գործել բարեխիղճ և ողջամիտ: Աշխատանքային իրավունքների չարաշահումն արգելվում է: Աշխատանքային իրավունքների իրականացմամբ և պարտականությունների կատարմամբ չպետք է խախտվեն այլ անձանց՝ օրենքներով պաշտպանվող իրավունքներն ու շահերը:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածը սահմանում է նաև, որ աշխատողը պարտավոր է բարեխիղճորեն կատարել աշխատանքային

պայմանագրով ստանձնած պարտավորությունները, պահպանել կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը, կատարել աշխատանքի սահմանված նորմաները, պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման պահանջները, բարեխղճորեն վերաբերվել գործատուի և այլ աշխատողների գույքին, ինչպես նաև մարդկանց կյանքին ու առողջությանը, գործատուի գույքի պաշտպանությանն սպառնացող վտանգի ծագման մասին անմիջապես տեղեկացնել գործատուին:

Միաժամանակ, օրենսդիրը աշխատողին պարտավորեցնում է աշխատանքային պարտականությունները կատարել օրինականության, բարեխղճության և ողջամտության սկզբունքների պահպանմամբ: Աշխատողն աշխատանքային պարտականությունները կատարում է ոչ թե ամբողջովին իր հայեցողությամբ, այլ պարտադիր կերպով ենթարկվելով աշխատանքային ռեժիմին, կազմակերպության ներքին կարգապահական կանոններին, աշխատանքային կարգապահությանը, աշխատանքի սահմանված նորմաներին: Նշված վերլուծությունը բխում է նաև ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 142-րդ հոդվածի 3-րդ մասից, որի համաձայն՝ աշխատողները պարտավոր են աշխատել սահմանված աշխատանքի (հերթափոխային) ժամանակացույցներին համապատասխան:

Գերագույն դատարանը փաստում է, որ գործատուն, իր ներքին իրավական ակտերով սահմանելով կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքի (հերթափոխային) և հանգստի ժամանակացույցերը (գրաֆիկները), աշխատողներին արտաժամյա աշխատանքի և հերթապահության ներգրավելու կարգը, միաժամանակ, ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 35-րդ հոդվածի հիման վրա իրականացնում է աշխատողների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ ոչ պետական վերահսկողությունը:

Այսինքն՝ օրենսդիրը, գործատուին իրավունք ընձեռելով սահմանել վերոնշյալ ակտերը, միաժամանակ վերջինիս իրավունք է ընձեռել վերահսկողություն իրականացնել դրանց պահպանման նկատմամբ: Վերահսկողության արդյունքում գործատուն հնարավորություն է ստանում կիրառել նաև համապատասխան պատասխանատվության միջոցներ, որոնց ընտրության կարգն ու կիրառման ընթացակարգը նույնպես սահմանված են ԼՂՀ աշխատանքային օրենսդրությամբ: Այսպես՝ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

Նույն օրենսգրքի 222-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողը:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց գրավոր բացատրության:

Նշվածներից բխում է, որ աշխատանքային պարտականությունները չկատարելու (աշխատանքի չներկայանալու) պատճառները բացահայտելու և, ըստ այդմ՝ աշխատողի արարքին գնահատական տալու և կարգապահական տույժ կիրառելու իրավաչափ հնարավորություն ձեռք բերելու համար

գործատուն պարտավոր է աշխատողից գրավոր բացատրություն պահանջել՝ սահմանել այն ներկայացնելու համար ողջամիտ ժամկետ:

Մինևույն ժամանակ, Գերագույն դատարանն արձանագրում է, որ աշխատանքային օրենսդրությունը հնարավոր է համարել կարգապահական պատասխանատվության կիրառումը նաև առանց աշխատողի կողմից բացատրություն ներկայացնելու: Նշված հոդվածի համաձայն՝ եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության: Հոդվածի կարգավորումից բխում է, որ առանց բացատրության կարգապահական տույժ կարելի է կիրառել, եթե աշխատողը բացատրություն չի ներկայացնում առանց հարգելի պատճառի: Այսինքն, կրկին առանցքային դեր է ստանձնում աշխատողի վարքագծի գնահատման հարցը:

Գերագույն դատարանը գտնում է, որ առանց աշխատողի գրավոր բացատրության կարգապահական պատասխանատվության կիրառումը ձևական առումով թույլատրելի պետք է համարել բոլոր այն դեպքերում, երբ օբյեկտիվ պատճառներով գործատուն հնարավորություն չունի աշխատողից պահանջել համապատասխան բացատրություն: Նման պատճառների թվին են դասվում արտակարգ կամ պատերազմական իրավիճակով պայմանավորված կապի և հեռահաղորդակցության միջոցների, փոստային ծառայությունների ամբողջական կամ մասնակի խափանումները: Այս համատեքստում, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված և նույն թվականի նոյեմբերի 09-ի հրադարարի համաձայնությամբ առկախված հերթական պատերազմը և դրա ընթացքում կապի միջոցների և փոստային ծառայությունների բնականոն աշխատանքի հանրահայտ խաթարումները դատարանը կարող է դիտարկել հարգելի պատճառ՝ կարգապահական ենթադրյալ խախտում թույլ տված աշխատողներից համապատասխան բացատրություն չպահանջելու, ինչպես նաև՝ աշխատողի կողմից պահանջված բացատրությունը չներկայացնելու առումով: Հետևաբար, դատարանները՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 09-ն ընկած ժամանակահատվածում կատարված ենթադրյալ կարգապահական իրավախախտումների վերաբերյալ կայացված անհատական իրավական ակտերի իրավաչափությունը գնահատելիս շեշտը պետք է դնեն ոչ միայն կայացված ակտի ձևական (իրավախախտից բացատրություն պահանջվել է, թե՛ ոչ), այլ նաև բովանդակային կողմի վրա և քննության առարկա դարձնեն նաև այն հարցը, թե՛ արդյոք աշխատողի արարքում առկա են աշխատանքային կարգապահության խախտման հատկանիշները, կամ այլ կերպ՝ հարգելի է արդյոք նրա աշխատանքի չներկայանալու բուն պատճառը: Միայն նման մոտեցման դեպքում կարելի է խոսել գործատուի շահերի և անօրինական կարգով աշխատանքից ազատված աշխատողի իրավունքների և օրինական շահերի միջև արդարացի հավասարակշռություն ապահովման մասին:

Գերագույն դատարանն անհրաժեշտ է գտնում արձանագրել, որ ԼՂՀ գործող օրենսդրությունն աշխատողի աշխատանքի չներկայանալու պատճառների հարգելիության սպառնիչ ցանկ չունի: Օրինակ, ԼՂՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանափակվել է միայն կարգապահական խախտում չհամարվող երկու դեպքի սահմանամբ (220-րդ հոդվածի 2-րդ մաս): Այն է՝

1) տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում այդ դեպքերով պայմանավորված՝ աշխատողի աշխատանքի չներկայանալը կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալը:



2) ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների չպլանավորված տեղափոխման կամ չպլանավորված տրամադրման ժամանակահատվածում մինչև տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով աշխատողի աշխատանքի չներկայանալը կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալը:

Գերագույն դատարանը գտնում է, որ նշվածից բացի, մասնավորապես, հարգելի կարելի է դիտարկել նաև աշխատողի աշխատանքի չներկայանալը կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալը հետևյալ դեպքերում ժամանակավոր անաշխատունակություն, հասարակական կամ պետական պարտականությունների կատարում (այդ թվում՝ օրենսդրությամբ նախատեսված եղանակով հավաստված կամավորական հիմունքներով Հայրենիքի պաշտպանությանը մասնակցություն), բժշկական հետազոտության կամ բուժօգնության ստացում, գործադուլի մասնակցություն, ազատությունից զրկված լինելը և այլն: Ընդ որում, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում բավարար չէ զուտ իրադրության կամ հանգամանքի արձանագրումը, անհրաժեշտ է նաև ներկայացնել համապատասխան հիմնավորող ապացույցներ (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակության թերթիկ, բուժհաստատությունից տրամադրված տեղեկանք՝ բուժօգնման կամ բուժօգնության մասին, ազատությունը սահմանափակելու վերաբերյալ արձանագրություն և այլն):

Այսինքն, սույն գործով դատարանի խնդիրն է ճիշտ բաշխել ապացուցման բեռը և կողմերի ներկայացրած ապացույցների հիման վրա գնահատական տալ Հայցվորի աշխատանքի չներկայանալու պատճառներին: Միայն վերջիններիս հաշվառմամբ կայացված դատական ակտը կարող է համապատասխանել օրենսդրությամբ սահմանված՝ օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելու հրամայականին:

Գերագույն դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում՝ ապացույցների պատշաճ գնահատման համատեքստում, տվել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտին առաջադրվող չափորոշիչները:

Այսպես՝ ԸԲԴ/0753/02/14 քաղաքացիական գործով Գերագույն դատարանը՝ 2015 թվականի հունիսի 23-ի որոշմամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «... գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ իր կողմից նշված փաստերը հիմնավորելու համար պարտավոր է ներկայացնել այդ փաստերը հիմնավորող ապացույցներ (...) Դատարանը վճիռը հիմնավորում է միայն դատական նիստում հետազոտված ապացույցներով: (...) յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման թե՛ իրավական և թե՛ փաստական հիմնավորումը: (...) Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառության մեջ, այն նորմի, որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: (...) դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է ներկայացված ապացույցը դրվում որոշման

հիմքում, կամ՝ մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին»:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ աշխատանքի չներկայանալու օրբեկտիվ և (կամ) սուրբեկտիվ դրոշմապատճառների վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու առավել իրական հնարավորությամբ օժտված է հենց աշխատողը, հետևաբար, գործատուի տեսակետից ցանկացած բացակայություն կարող է դիտարկվել անհարգելի: Այսինքն, աշխատանքային հարաբերություններում աշխատողի աշխատանքի չներկայանալու պատճառներն անհարգելի են այնքան ժամանակ, քանի դեռ չեն ներկայացվել դրա հակառակը հիմնավորող համապատասխան ապացույցները:

Ըստ այդմ, Գերագույն դատարանը գտնում է, որ աշխատանքի չներկայանալու հիմնավորմամբ աշխատանքից ազատելու օրենքով նախատեսված հիմքի առկայության (հրամանի փաստական կազմի) և կայացված անհատական իրավական ակտի ընդունման ընթացակարգի պահպանման (հրամանի իրավական կազմի) ապացուցման պարտավորությունը կրում է գործատուն, իսկ թույլ տրված բացակայության՝ հարգելի լինելու պատճառների վերաբերյալ ապացույցներ ներկայացնելունը՝ աշխատողը: Ընդ որում, նշված հիմքով աշխատանքային պայմանագիրը միակողմանի լուծելու (պաշտոնից ազատելու) վերաբերյալ անհատական իրավական ակտի իրավաչափությունը ստուգելու համար դատարանները՝ անկախ ներկայացված հայցի իրավական հիմքից, պետք է ղեկավարվեն ԼՂՀ աշխատանքային և տվյալ պաշտոնին վերաբերող հատուկ իրավական նորմերով, հաշվի առնելով հայցի փաստական կազմը:

Գերագույն դատարանը ԸԻԴ/1603/02/18 քաղաքացիական գործով 2019 թվականի հունիսի 25-ի որոշմամբ արձանագրել է, որ հայցի հիմքը, որպես հայցի բովանդակության տարր, հայցը բնութագրում է այն տեսանկյունից, թե ինչ իրավաբանական փաստերի հիման վրա է հայցվորը խնդրում պաշտպանել իր նյութաիրավական պահանջը: Այդ իրավաբանական փաստերն էլ հենց հանդիսանում են հայցի հիմքը: Դատարանը կաշկանդված չէ հայցվորի հայտարարած փաստերի իրավական որակմամբ և պարտավոր է իրավական գնահատական տալ, իրավաբանորեն որակել հենց հայցվորի ցույց տված իրավաբանական փաստերը: Ընդ որում, ի տարբերություն հայցի հիմքի իրավաբանական փաստերի, հայցի իրավական հիմնավորումը հայցվորի կողմից կարող է փոփոխվել վարույթի բոլոր փուլերում, այդ թվում՝ դատաքննության ժամանակ, ինչպես նաև վերաքննիչ և վճռաբեկ վերանայման ընթացքում: Քաղաքացիական գործի քննության և լուծման համար անհրաժեշտ իրավական նորմերը որոշելը և կիրառելը դատարանի պարտականությունն է: Դատարանը բոլոր դեպքերում դատական քննության ենթակա վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նորմերը ընտրում և կիրառում է՝ ելնելով հայցի հիմքում ընկած իրավաբանական փաստերից, այլ ոչ թե հայցվորի վկայակոչած իրավական նորմերից (որոնք կարող են նույնիսկ ոչ ճիշտ վկայակոչված լինել):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ Դոդովն ընդդեմ Բուլղարիայի գործով իր 17.01.2008թ. վճռում նշել է, որ «քաղաքացիական դատավարությունում ձևավորված պրակտիկայի համաձայն՝ դատարանները քննության են առնում և որոշում իրենց ներկայացված հայցերի իրավական բնութագրի՝ առանց հաշվի առնելու հայցվորի առաջարկած իրավական բնութագրի: Հայցվորը պետք է ներկայացնի վիճելի հարցը՝ հստակեցնելով փաստերը և իր հայցապահանջը, սակայն նա չի կրում որևէ պարտականություն՝ հստակեցնելու դրա բնութագրին իրավունքում: Եթե

նույնիսկ հայցվորը նշում է իր հայցի իրավական բնութագիրը, դատարանը կաշկանդված չէ դրանով: Դատարանը պետք է տա իր ինքնուրույն գնահատականը»:

4.3 Ինչ վերաբերում է սխալ իրավական հիմքով գործատուի կայացրած անհատական իրավական ակտի իրավաչափությանը, ապա Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն.

«1. Աշխատանքային իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը:

(...):

3. Աշխատանքային իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝

(...)

4) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ գործատուի իրավական ակտն անվավեր ճանաչելով.

(...):»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին վերաբերող օրենսդրական տեխնիկայի, նորմատիվ իրավական ակտի կառուցվածքի, նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նորմատիվ իրավական ակտերի գործողությունը դադարեցնելու, ժամկետների հաշվարկման վերաբերյալ դրույթների գործողությունը տարածվում է անհատական և ներքին իրավական ակտերի վրա, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ այն նորմատիվ իրավական ակտով, որով նախատեսվել է անհատական կամ ներքին իրավական ակտի ընդունում:

Նույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի, բացառությամբ Մասնանադրության, գործողությունը դադարեցվում է՝

1) նորմատիվ իրավական ակտն ուժը կորցրած ճանաչվելու դեպքում.

2) նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչվելու դեպքում.

3) նորմատիվ իրավական ակտը չեղյալ ճանաչվելու դեպքում.

4) նորմատիվ իրավական ակտը վերացված ճանաչվելու դեպքում:

Նույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն անվավեր է ճանաչվում իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմնի ակտով, եթե նորմատիվ իրավական ակտն ընդունվել կամ գործել է՝ հակասելով ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի:

Այսինքն, անհատական իրավական ակտը կարող է անվավեր ճանաչվել, եթե այն ընդունվել է կամ գործել է՝ հակասելով ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի:

Նշվածն արտածելով սույն վարույթի շրջանակներում վեճի առարկա համարվող անհատական իրավական ակտին, Գերագույն դատարանը փաստում է, որ այն ակնհայտորեն կայացվել է սխալ իրավական հիմնավորմամբ, քանի որ, ինչպես արդեն նշվել է սույն որոշմամբ, առանց հարգելի պատճառի աշխատանքի չներկայանալու հիմքով պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի լիազորությունների դադարեցման համար գործում են հատուկ օրենսդրական կարգավորումներ:

Միննույն ժամանակ, Գերագույն դատարանն արձանագրում է, որ կայացված անհատական իրավական ակտի իրավաչափությունը մեծապես կախված է նրա փաստական կազմի՝ օբյեկտիվ իրականության արտացոլումը հանդիսանալու հավաստիությունից: Եվ, եթե դատական քննության ընթացքում պարզվի, որ Հայցվորի՝ առնվազն երեք օր անընդմեջ աշխատանքի չներկայանալու պատճառները հարգելի չեն, ապա կայացված անհատական իրավական ակտը չի կարող ճանաչվել անվավեր, քանի որ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ԼՂՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետի ուժով, նման դեպքում, Հայցվորի լիազորություններն աներկբա ենթակա են դադարեցման: Այսինքն, օրենքով նախատեսված լիազորությունների դադարեցման հիմքի առկայության պայմաններում, թեև սխալ իրավական հիմքով, սակայն բովանդակային առումով ճիշտ աշխատանքային հարաբերությունները դադարեցնող հրամանը չի կարելի համարել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին հակասող և անվավեր:

4.4 Անդրադառնալով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների կիրառելիությանը, Գերագույն դատարանը փաստում է, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը ԱՀ դատական համակարգի մաս չի կազմում, հետևաբար նրա կողմից կայացված դատական ակտերում արտահայտված դիրքորոշումները որևէ առումով ԱՀ դատական մարմինների համար պարտադիր կիրառման ենթակա ուժ չունեն: Այնուհանդերձ, Գերագույն դատարանը գտնում է, որ ԱՀ դատավորները՝ իրենց վարությամբ քննվող գործերով դատական ակտեր կայացնելիս, անկաշկանդ կարող են օգտվել իրավական խնդիրների վերաբերյալ թե՛ դոկտրինալ (այդ թվում և՛ ՀՀ) և թե՛ գործնական (այդ թվում և՛ ՀՀ դատական մարմինների արտահայտած) որակյալ մասնագիտական վերլուծություններից: Այս հարցում էական նշանակություն է ձեռք բերում միայն ու միայն քննվող գործի փաստական կազմի նկատմամբ դրանց կիրառելիությունն ու պատշաճ պատճառաբանվածությունը:

#### **5. Սույն որոշման հիմնավորումների կիրառումը գործի վերաբերյալ**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Հայցվորը վիճարկել է Պատասխանողի 2020 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 106 անհատական իրավական ակտը: Վերջինս կայացվել է Հայցվորի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու և նրան պաշտոնից ազատելու վերաբերյալ: Ընդ որում, որպես անհատական իրավական ակտի փաստական հիմք է նախանշվել Հայցվորի կողմից անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը, իսկ որպես իրավական հիմք՝ արձանագրվել ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, ԱՀ նախագահի 2020 թվականի հոկտեմբերի 14-ի ՆՇ-465-Ն հրամանագիրը, ԱՀ կառավարության 2004 թվականի մարտի 16-ի թիվ 97 որոշմամբ հաստատված հավելվածի 1-ի 13-րդ կետի 11-րդ ենթակետը:

Դիմելով դատարան, Հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել Պատասխանողի կողմից կայացված անհատական իրավական ակտը, քանի որ՝

ա) Հայցվորը 2020 թվականի հոկտեմբերի 03-ից՝ ԱՀ արդարադատության փոխնախարարի գիտությամբ, կամավորական հիմունքներով մեկնել է հայրենի գյուղի պաշտպանությանը: 2020 թվականի հոկտեմբերի 21-ին՝ փոխնախարարի հետ անհապաղ կապ հաստատելու և արխիվի տարհանման աշխատանքները կազմակերպելու Հայցվորին փոխանցված խնդրանքին վերջինս պատասխանել է, որ իր ներկայանալը՝

պատերազմական վիճակով պայմանավորված հնարավոր չէ, սակայն աշխատանքները կարող են կազմակերպվել իր տեղակալի հետ: Նույն պատասխանն է հնչել նաև հաջորդ օրը Հայցվորի հետ կապ հաստատած նախարարի հետ հեռախոսագրույցում:

բ) Հայցվորի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու և նրան աշխատանքից ազատելու վերաբերյալ անհատական իրավական ակտը կայացվել է գործող օրենսդրության պահանջների խախտմամբ, քանի որ Հայցվորից չի պահանջվել խախտման պատճառների մասին գրավոր բացատրություն:

Որպես հայցի իրավական հիմք է նախանշվել կարգապահական պատասխանատվության ենթարկելու կառուցակարգերը սահմանող ԼՂՀ աշխատանքային օրենսդրության նորմերը:

Սույն որոշմամբ արդեն հայտված իրավական դիրքորոշման հաշվառմամբ, Գերագույն դատարանն արձանագրում է, որ անկախ այն փաստից, որ Հայցվորը դատարան ներկայացված հայցի իրավական հիմք է նշել միայն ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի կարգապահական պատասխանատվության վերաբերյալ իրավանորմերը, Առաջին աստիճանի դատարանը պետք է քննարկման առարկա դարձներ հայցում ներառված փաստական կազմը և ինքնուրույն որոշեր վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավանորմերի շրջանակը:

Այսինքն, Առաջին աստիճանի դատարանը պետք է արձանագրեր, որ Հայցվորը պաշտոնավարել է պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում և քննություն իրականացնել պարզելու համար, թե արդյոք Հայցվորի՝ 2020 թվականի հոկտեմբերի 03-ից մինչև հոկտեմբերի 23-ը ներառյալ աշխատանքի չներկայանալու և ԱՀ Հաղորդի շրջանի Քարինգ (Արփազյադուկ) գյուղում գտնվելու փաստը կարող է համարվել աշխատանքից բացակայելու հարգելի պատճառ, թե՛ ոչ: Դրան հակառակ, Առաջին աստիճանի դատարանն իր դատողությունները կառուցել է բացառապես կարգապահական տույժ կիրառելու ընթացակարգային կարգավորումների շուրջ և անհատական իրավական ակտի իրավաչափության վերաբերյալ եզրահանգում արել միայն աշխատողից խախտման պատճառների վերաբերյալ գրավոր բացատրություն պահանջված չլինելու փաստի հաշվառմամբ: Ավելին, գործը դատաքննությանը նախապատրաստելու փուլում Առաջին աստիճանի դատարանը չի բաշխել ապացուցման բեռը և որևէ կողմի չի ծանրաբեռնել Հայցվորի աշխատանքի չներկայանալու պատճառները հիմնավորող ապացույցներ ներկայացնելու պարտավորությամբ:

Մինևույն ժամանակ, Հայցվորի ներկայացրած տեղեկանքից և նրա բացատրությունից ենթադրելով, թե Հայցվորը մասնակցել է հայրենի գյուղի ինքնապաշտպանությանը, Առաջին աստիճանի դատարանը որևէ եզրահանգում չի արել աշխատանքից բացակայելու պատճառի հարգելիության վերաբերյալ:

Իր հերթին, Վերաքննիչ դատարանը կայացված որոշմամբ առաջադրել և պատասխանել է հետևյալ հարցադրումներին՝

- ինչպիսի առանձնահատկություններով է օժտված պետական կազմակերպության տնօրենի պաշտոնեական կարգավիճակը,

- արդյոք պետական կազմակերպության տնօրենի նկատմամբ ամբողջ ծավալով տարածվում են ԼՂՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ աշխատողի ընդհանուր կարգավիճակից բխող երաշխիքները,

- լիազորված պետական մարմինը՝ պետական կազմակերպության տնօրենի աշխատանքի չներկայանալու կոնկրետ որ դեպքում կարող է վաղաժամկետ դադարեցնել նրա պաշտոնավարումը:

Նշված հարցադրումների պատասխանների արդյունքում, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Հայցվորի առաջադրած իրավական վեճի քննությունը պետք է իրականացվի ոչ թե ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի կարգապահական պատասխանատվությունը կարգավորող իրավանորմերի, այլ պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցման վերաբերյալ օրենսդրական կարգավորումների շրջանակներում: Այսինքն, արձանագրվել է Առաջին ատյանի դատարանի կողմից նյութական իրավունքի նորմի (ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ և 265-րդ հոդվածներ) սխալ կիրառում: Այնուհետ, Վերաքննիչ դատարանը, գնահատելով գործում առկա ապացույցները, եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանը խախտել է նաև դատավարական իրավունքի նորմերը (ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ, 49-րդ և 123-րդ հոդվածներ), քանի որ հիմնավորված չէ Հայցվորի՝ հայցադիմումում նշված այն փաստական հիմքը, թե աշխատանքի չներկայանալու պատճառը հարգելի է: Նշվածներից բացի, Վերաքննիչ դատարանը գտել է, որ վիճարկվող անհատական իրավական ակտը, թեև կայացվել է ոչ այն իրավական նորմերի վկայակոչմամբ, որոնք վերաբերելի են տվյալ իրավահարաբերությանը, սակայն իր հիմքում ունի Հայցվորի լիազորությունները դադարեցնելու օրենքով սահմանված փաստական հիմք, ուստի միայն ձևական առումով սխալն այն ոչ իրավաչափ ճանաչելու հիմք համարվել չի կարող:

Նշվածների վերաբերյալ Գերագույն դատարանը, փաստում է.

ա) Վերաքննիչ դատարանի կողմից քննության առնված նյութական իրավունքի ենթադրյալ խախտման (ԼՂՀ աշխատանքային իրավունքի նորմերի կիրառելի չլինելու պայմաններում՝ դրանց կիրառման) հիմք կամ հիմնավորում ներկայացված վերաքննիչ բողոքը չի պարունակում,

բ) Առաջին ատյանի դատարանը որևէ կերպ չի քննարկել Հայցվորի աշխատանքից բացակայելու հարգելիության հարցը, այդ մասին համապատասխան եզրահանգում չի արել և հայցը բավարարել է բոլորովին այլ հիմնավորմամբ, հետևաբար, այդ հարցի քննարկումը դուրս էր վերաքննիչ բողոքարկման, ուստի և՛ վերաքննության ծավալից,

գ) ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի՝ կարգապահական պատասխանատվությանն առնչվող իրավանորմերը սույն գործի նկատմամբ կիրառելի են:

Գերագույն դատարանը գտնում է, որ, Վերաքննիչ դատարանը, դուրս գալով միայն վերաքննիչ բողոքի սահմաններում գործի քննությունն իրականացնելու իր լիազորության սահմաններից, ոչ թե դատական ստուգման է ենթարկել Առաջին ատյանի դատարանի վճռի օրինականությունն ու հիմնավորվածությունը, այլ գործում առկա ապացույցների օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ հետազոտության արդյունքում քննության է առել հայցը, որոշել գործի քննության համար

կիրառելի նյութական նորմերի շրջանակը և դրանց սահմաններում կայացրել գործն ըստ էության լուծող դատական ակտ: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, թե գործում առկա ապացույցները հնարավորություն են տալիս գնահատել նաև Հայցվորի աշխատանքի չներկայանալու պատճառները, այն դեպքում, երբ այդ ուղղությամբ Առաջին ատյանի դատարանը ապացույցների բաշխման կանոնները չի կիրառել, որևէ կողմի վրա ապացույց ներկայացնելու պարտավորություն չի դրել և, ըստ այդմ էլ, համապատասխան ապացույց չի հետազոտել և եզրահանգում չի կատարել: Ինչ վերաբերում է Հաղորդի շրջանի վարչակազմի ղեկավարի տրամադրած տեղեկանքին, ապա վերջինս կարող է հանդես գալ միայն որպես Հայցվորի՝ Հաղորդի շրջանի Քարինգ համայնքում գտնվելու փաստը հիմնավորող, բայց ոչ՝ նրա աշխատանքի չներկայանալու պատճառը հարգելի կամ անհարգելի դարձնող ապացույց:

Սույն վարույթի շրջանակներում կիրառելի նյութական նորմերի ընտրության, ինչպես նաև Արցախի Հանրապետության տարածքում ընթացած մարտական գործողություններին կամ որևէ համայնքի ինքնապաշտպանությանը մասնակցած համարվելու վերաբերյալ հավաստի ապացույցներ ներկայացնելու չափորոշիչների արձանագրման հարցում Վերաքննիչ դատարանի դիրքորոշմանն իր լիակատար համաձայնությունը հայտնելով հանդերձ, Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր Առաջին ատյանի դատարանի փոխարեն լուծել սույն գործով առաջադրված վեճն ըստ էության:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի խախտում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Իրավանորմի կարգավորումից բխում է, որ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս գալու եղանակով Վերաքննիչ դատարանի կողմից դատավարական իրավունքի նորմի խախտում թույլ տված լինելու փաստը, ինքնին, դատական ակտը բեկանելու անվերապահ հիմք չէ. անհրաժեշտ է դիտարկել նաև դրա ազդեցությունը գործի ելքի վրա: Գերագույն դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից Հայցվորի աշխատանքի չներկայանալու պատճառները պարզելու և դրանց հարգելի կամ անհարգելի համարելու ուղղությամբ որևէ քննություն իրականացված չլինելու պայմաններում Վերաքննիչ դատարանի կողմից անհատական իրավական ակտի իրավաչափությանը գնահատական տալը չի կարող համարվել ճիշտ ելքով դատական ակտի կայացում: Դրանից բացի, Գերագույն դատարանը, սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշման շրջանակներում իր անհամաձայնությունն է հայտնում նաև Վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, թե՛ առանց հարգելի պատճառի աշխատանքի չներկայանալու հիմքով պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի լիազորությունը դադարեցնելու վերաբերյալ անհատական իրավական ակտ կայացնելու համար աշխատողից

բացատրություն պահանջելը պարտադիր չէ և սույն գործով ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառելի չեն:

Նշվածների հաշվառմամբ, Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելով և փոփոխելով, դուրս է եկել վերաքննիչ բողոքի սահմաններից և դրանով իսկ թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի խախտում, որը կարող էր ազդել գործի ճիշտ ելքի վրա: Ուստի, տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ վճարել բողոքը բավարարելու, դատական ակտը բեկանելու և գործը՝ Առաջին ատյանի դատարան, նոր քննության ուղարկելու՝ Գերագույն դատարանի լիազորությունը:

Ընդ որում, գործի նոր քննությունն անհրաժեշտ է կազմակերպել հաշվի առնելով ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի, ինչպես նաև Հայցվորի զբաղեցրած պաշտոնին վերաբերող աշխատանքային իրավահարաբերությունները կանոնակարգող հատուկ իրավական նորմերն ու Հայցվորի կողմից աշխատանքից բացակայելու պատճառների իրական բնույթը (հարգելի կամ անհարգելի համարելու առումով):

**6. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

Գերագույն դատարանը, նկատի ունենալով, որ գործն ուղարկվում է նոր քննության, գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 256-րդ հոդվածի 1-ին մասով

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճարել բողոքը բավարարել: Բեկանել ԸԻԴ/2727/02/20 քաղաքացիական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2021 թվականի մայիսի 14-ի որոշումը և գործն ուղարկել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն

**Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ  
Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ  
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
Կ.ՂԱՐԱՅԱՆ**